ՀԱՅ ԴԱՏԻ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ

Հայ Դատի Ամերիկացի բարեկամները մի դիմում են կատարել Մ. Նահանգների Նախագահ Թրումանին և արտաքին գործոց Նախարար Բըրնսին առաջարկելով Խ. Հայաստանին կցել Սևրի դաշնագրով և Ուիլսընեան սահմանագծումով ճշտորոշուած ներկայումս Թիւրքիայի տիրապետութեան տակ գտնուող հայկական հողամասերը՝

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՆՈՐ ԴԻՄՈՒՄԸ

Պոտսդամի կապակցութեամբ՝ Հայ Դատի Յանձնախումբը մի նոր յուշագիր է յանձնել Երեք Մեծերին՝ պահանջելով Սևրի դաշնագրով և Ուիլսընեան սահմանագծումով ճշտուած Թրքահայ հողերի կցումը արդի Հայաստանին։

ՆՈՐ ՅՈՒՇԱԳԻՐ

Լոնդոնից Ռէյթըր գործակալութիւնը հաղորդում է—.Դաշնակից մեծ պետութիւններից հայկական Հարցի կարգադրութիւնը պահանջող մի յուշագիր է ներկայացուել Լոնդոնի արտաքին գործոց նախարարների Խորհրդաժողովին, պ. Ժիրայր Միսաքեանի կողմից, որ հաստատում է, թէ գործում է յանուն հայ ընկերվարական կուսակցութեան*)։

Յուշագիրն ասում է.

«Հայերը զոհ եղած են ամենամեծ անարդարութիւնների։ Պարտադրուող ռեական և արդար միակ լուծումն այն է, որ մշակուի նախագիծ, որի շնորհիւ Թիւրքիան (որ դրժել է Սևրի դաշնագիրը) հրաւիրուի ի նպաստ Խ. Հայաստանի հրաժարուելու այն բոլոր իրաւունքներից ու իրաւասութիւններից, որոնք նախագահ Ուիլսընի կողմից սահմանուած էին Հայաստանին։

Այսպիսով Հայաստան պիտի ունենայ լիովին զարգացնելու իր մշակութային և տնտեսական աղբիւրները և իր կարողը նուիրելու ի սպաս քաղաքակրթութեան և ազգերի համերաշխութեան»։

---

*) Ժ. Միսաքեան «Յառաջ»ի խմբագիր Շաւարշ Միսաքեանի եղբայրն է, տարիներից ի վեր հաստատուել է Լոնդոնում։ Յուշագիրը ներկայացուած է յանուն Հ. Յ. Դաշնակցութեան։

«Ալիք»

ALIQ | October 11, 1945